

ների երկրպագուն գտանալով՝ փոխանակ իս-
կական աղբիւրից առնելու հոգի և կեանք և
ծմարտութիւն՝ առուներին զիմելով և ապա-
ցուցանելով, ու փակական լոյսը դեռ չէ աեռ-
նում, այլ կիսաբաց բժոտ աշքերով անորոշ
անդոյն մի շամանդաղ է միայն նկատում:

! Այսինք չէ անում միթէ, և մեր ժողովուր-
դը, նա ել մի ինչ որ լոյսի ետելից է ընկած,
նորան ել մի նոր քարոզութիւն է եղել և այդ
քարոզութիւնը յառաջ է բերել բաժանումն
հոգիների: Մի շարք անուններ զոյնզոյն
զրօշակների վերայ զրելով նու հակառակ ճա-
նապարհներօվ դէպի մի նոր աշխարհ է ա-
ռաջնորդում անջատ անջատ բանակների: Յա-
ւալի տարբերութիւնն այն է միայն որ աշ-
խարհի իմաստութեան հետեւող կորնթացի-
ներին աւետարանի ծմարտութիւնն էր քա-
րոզուած և նոքա տարբեր անուան տակ,
տարբեր հոգւով դէպի արդ ճշմարտութիւնը
զիմելու ցանկութիւն ունեին, մինչդեռ այս-
տեղ աւետարանին հետեւող մի ժողովուրդ աշ-
խարհի իմաստութեանն է ծանօթացել նորա
կարագեաններին է հետեւում: «Խսկ արդ՝ բա-
ժանեալ ինչ իցէ Քրիստոս» հարցնում էր ա-
ռաքեալը և մենք ստիպուած ենք հարցներ.
Քաժան բան է միթէ ծմարտութիւնը»: Մի-
թէ այն ծմարտութիւնը, որ մեր հայրերի
համար ճանապարհ էր դէպի կեանք, գաղտ-
րումէ մեզ համար նոյնը լինելուց և այն ա-
նունը, որ մեր հայրերի առաջնորդով զրօշակն
էր զարգարում, նոցա հոգի տալիս, նոյն հոգ-
ւով, մի՛ սուրբ գործի համար ի մի ձուլում՝
նսեմացել է նոր անունների շուքի առաջ: Ա-
զորմելի անուններ, ողորմելի առաջնորդներ մի
ողորմելի ժողովրդեան ... ի՞նչ է նոցա զօրու-
թիւնը, ուր նոցա տուած արզիւնքը—հոգին:
Զէ անտանելի, արգէն հեղձուցիչ է այս նոր,
արհետական մթնոլորդը. ինելամաղ և կուրա-
ցուցիչ այս կարծեցեալ նոր լոյսը, անուն պէտք
է, որ հոգի տայց, հոգի պէտք է, որ շունչ
ինքը, ջերմութիւն և կեանք բերէ, որ իրքէ
մի թիթէ զովարար զեփիւռ անցնէ մեր այս
անապատ աշխարհի վերայից, ուժգին մի հոգմ

դառնայ մէզն ու մասյլ փարատէ, փոթորիկ
դառնայ ամպ ու կայծակ ժողովի, ջնջէ, մաք-
րէ օղը, կենսարել անձրեսով երկիրը ցօղէ:

Մի անուն, որ ի վեր է քան զամանայն
անուն, «զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամե-
նայն ծունը կրկնեցի»: Նոյն անունը, որ
Միածնի Յածարի Ճակատին է զրոշմած, զը-
րոշմած ուրեմն և «Առաջապէ Ճակատին» միակ
ճշմարիտ նշանաբանն է, միայն սօւրբ, միայն
երկրպագելի, միայն յաւիտենական ... Յիսուս
Քրիստոս ... Յիսուս Քրիստոս երէկ և այսօր
նոյն և յաւիտեան»:

Կ. ԵԲԵԳ.ԱՅՑ ՏՒ: ՄԱՏՏԱՐԵԼՈՒ.



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՊԵՑՈՒ ՍՈՒՐԲ ԿԱՐԳԸ.



(Հարունակութիւն*)

յաքանս բաւական է հա-
մոզուելու համար, որ
Եկեղեցու կարգ ու կա-
նոնք անփոփոխելի են, |
Ժողովը կաթուզիկո-
սական վճռով կարող
է թերին և պակասը
լրացնել. նոյնը կարէ անել և կաթուզիկոնն
ինքնն որ ժողովի իրաւասութիւն տուողն է: |
Սոր կանոնն պէտք է Եկեղեցու կանոնադրա-
կան սկզբունքի վրայ հաստատի: Կանոնը
կվերանայ միայն այն ժամանակ, երբ նորա
հիմունքն ու բարոյականացնելու, սրբազնութե-
լու հանդամանքն այլ ևս չկայ, ըստ որում
այլ ևս չի գործադրուիլ. Եթէ այդպէս լինի,
ինչպէս յածախ շեշտեցինք, այն ժամանակ
Եկեղեցու կարգ ու կանոնի ոյժը կիորչի և
մարգկային կդառնայ, վասն զի Ա. Հոգու ներ-

* Տես Նախընթաց ճամարում:

† . Բայց աւանդութեանց ճակատակելց առաջնոց հարցն
Սրբոց ոչ այլ ինչ է պատճառ. քան թէ տգիտութիւն ու
ընցնորդն անծնահամապատասխան : Ծնորնախ. էլ, 7: |

շնչումները չեն կարող իրար հակառակ լինել և իրար եղջել:

Եւ ինչպէս որ կաթուղիկոսն է ժողովական խորհրդների վճիռը հաստատող, հրատարակող, և գործադրել հրամայողն, այնպէս էլ նա է այդոնք զանազան պարագաների մէջ զանազանակերպ գործադրողը: Աս պատասխանատու է, որ կանոնի սկզբունքը շտուժի: Ըստ այսմ քանի որ ամենայն մի շնորհ բաշխողն է կաթուղիկոսն և բաշխումէ նորանու ում համար ինքն իսկ երաշխաւոր է, այնպէս էլ իրաքանչիւր եկեղեցականի կամ Եկեղեցու ժողովական հաստատութեան համար երաշխաւորն ու պատասխանատուն ինքն է և ինքն է նոցա որ և իցէ իրաւասութիւն տուողը կամ յետ առնողը: Զորօր. նա կարող է հըրամայել, որ այս ինչ հանգամանքում լուծուած համարեն պսակն և կենդանի ամուսնուն իրաւունք տան պսակուելու, բայց կարող է և այդ իրաւունքը յետ առնել, ելք տեսնէ թէ Հայաստանեայց Եկեղեցու սկզբունքը տուժումէ եպիսկոպոսաց ձեռքում որոնք Ա. Հոգու շնորհը միմիայն մասնաւորապէս են վայելում: Այս աւետարանի սկզբունքն է, ինչպէս տեսանք վերև, և չի կարելի դաւածանել դորան: Հակառակող կիմնի անշուշտ, որպէս Պօղոս առաքեալն է ասում: «Եկեցէ ժամանակ զի ողջմատութեան վարդապետութիւնն ոչ անսայցեն, այլ ըստ իրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց»: Ավակայն և այնպէս եթէ մինչեւ անգամ Շմարիտ հաւատացողլք շատ սակաւ լինին, Քրիստոսի Եկեղեցին միշտ իւր Շմարտութեան մէջ անցողողդր: Հայաստանեայց Եկեղեցին իրբեւ Շմարիտ քրիստոնէական Եկեղեցի պէտք է միշտ կոռուէ իւր Հակառակորդաց դէմ և երբէք չշեղուի նախնեաց շաւղից, լսելով նոցա «որոնք» կամին լինել վարդապետք օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, և ոչ վասն որոյ պնդեալ են»: Եկեղեցու վար-

դապետի ասածն այն ժամանակ նշանակութիւն ունի, եթէ նա հաւատացող է իւր կեանքը նուիրած է բարեպաշտութեամբ ուսումնասիրելու: Հայաստանեայց Եկեղեցին: Հայաստանեայց Եկեղեցու Քահանայապետը մած պատասխանատութիւն ունի Քրիստոսի առաջ և մահու չափ պարտաւոր է բարձրը դասել Շմարտութիւնը հարկաւոր մարդկանցից: Իսկ եթէ Հայոց Եկեղեցու սկզբունքներին հակառակ ընթանայ թէ կղրկուի Ա. Հոգու առաքելական աւանդական շնորհներից և թէ կընկնի նախնեաց բազմաթիւ սոսկալի նզովքների ներքոյ, որոնց հիմունքն է, «որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնաօձ», և կամ «Ամենայն որ ոք հարցի ընդ վիմիս ընդ այս խորակեացի և փշրեսցի ...»:

Այս ամենը բոլորովին պարզ է և անհակառակելի, ըստ որում և աւելորդ է երկարաբանել: Այժմ թուենք մի առ մի կաթուղիկոսի բոլոր իրաւունքները: Վերլուծաբար քաղելով այն շնորհներից, որոնք ստացել է օծմամբ Ա. Հոգուց: Այդոնք են.

1. Հայաստանեայց Ա. Եկեղեցու առաքելայաջորդ միակ ընդհանրական զլուխ և հոգեորտեր լինելը, վասնորոյ և յիշել տալ իւր անունը պատարագի մէջ ամեն ուրիշ, նաև պինդ պահպանել Հայաստանեայց Ա. Եկեղեցու աւանդական անարտատութիւնն և իշխանութիւնը:

2. Եպիսկոպոսներ ձեռնադրել վարդով, հաւատագով ու զիստութեամբ արժանաւորներին ժողովրդական կամ միարանական ընտրութեամբ:

3. Վարդապետներ ձեռնադրել և կամ հըրամայել ձեռնադրել մի եպիսկոպոսի, որ ժամանակ հըրամայել ձեռնադրել մի եպիսկոպոսի:

1. • Որպէս զլուխ առաջ լուսոյ խաւար է, Հայուս եւ ազգ առաջ Ս. հաւատոյ պիտօ: Այլ լաւ է մի ոչխար ի փարակն Աստուծոյ, քան զաւազար զայց Նւ լաւ է մի զայցին, քան զաւազար աղուէս: Նւ ի դիտանոցի անզ լաւ է մի այր սրատես, քան հազար զաւազու Նւ լաւ է մի վկայ ի վերայ Շմարտութեան, քան զաւազար թիր Թօնսամի: Պ. Տարօնացի, Թուղթ. Կ. Պոլիս 1858. էջ. 247:

2. Մատթ. Ժ, 37, 38:

3. Գրիգոր Ֆուայ, Թուղթ. էջ, 19:

լուսոյն իշխանութիւն և ստացել և «մեծ վարդապետ» է:

4. Միւռոն օրհնել և բաշխել:

5. Եսպիսկոպոսաց վարդապետաց պատճել աղաղաշարանքով ևն:

6. Ազգային եկեղեցական ընդհանուր ժողով գումարել:

7. Արքեպիսկոպոսութիւն տալ իւրեանից յետոյ երկրորդը դարձնելով արժանաւոր եպիսկոպոսին:

8. Վանքերում նոր կարգեր մոցնել կամ հինը նորոգել և լրացնել նոյնպէս և Ս. Խջմածնում ամեն բան կարգադրել բարձրագոյն իշխանութեամբ:

9. Ուրիշ միարանութիւնից եկած եկեղեցականին ընդունել կամ տեղափոխել:

10. Եկեղեցականներին պարզեազրել:

11. Ըստատիւ և ուխտազանց եկեղեցականը պատճել կամ հարգանք անել:

12. Փոքր կաթուղիկոսներին և պատրիարքներին իրատական, զգուշացուցիչ պարգևական և այլ կոնդակներ ուղարկել և նոցա անհրաժեշտ իրաւունքներ որոշել:

13. Կոր վիճակներ հաստատել:

14. Առաջնորդներ նշանակել և արձակել: *

15. Վերադիսել բոլոր եպիսկոպոսներին, որ իւրեանց ուխտին հաւատարիմ մնան և իւրեանց եկեղեցական և ազգային պարտաւորութիւնք կաարեն. նոցա զրաւոր զեկուցու մներն ընդունել և նոր անօրէնութիւնք անել վիճակներում:

16. Եպիսկոպոսաց վճրուների գէմ եղած բողոքների վերաբերմամբ ծանրակշիռ կարգադրութիւնք անել (քննութիւնը Կ. Պօլսի կը բօնական ժողովի և Ս. Անողի գործ է, զի սոքա են կաթուղիկոսի յանձնարարական առեանները):

17. Եկեղեցական կարգապահութեան վերաբերմամբ կանոնադրութիւններ կազմել:

18. Ժաղովներ գումարել արտակարգ հար-

ցերի մասին խորհրդածելու եպիսկոպոսների և վարդապետների հետ:

19. Անձամբ այցելել կամ Նուիրակներ և պատուիրակներ, այլ և վարդապետ քարոզիչներ ուղարկել բոլոր վիճակները:

20. Աւրաքանչեւր կամեցողին ընդունել, լսել նորա խնդիրն և կարգադրութիւն անել ամրող Եկեղեցում:

21. Կոնդակներ հրատարակել — օրհնութեան, իրաւատրական, չնորհակարութեան, նուիրատութեան, յորդումնաց ևն. բոլոր Հայոց համար:

22. Բաշխումներ, ներումներ և առանձնաշնորհումներ անել ըստ Հայոց Եկեղեցու ողուն:

23. Զանազան հանգամանաց մէջ օրինական բացառութիւնք անել Հայոց Եկեղեցու սկզբանց հիման վրայ:

24. Վարդապետական (գաւանական, բարոյական, պաշտական ևն) վճռներ տալ:

25. Կրօնական գրքեր թոյլատրել արգելել և կրօնական յօդուածներ հրատարակել տալ ի հերքումն կամ ի քաջալերութիւն և ի ջատագովութիւն:

26. Համայնքներ բանադրել և կամ ներել:

27. Հսկել հոգեւոր գպրոցների և նոցա կը բօնական ուղղութեան, Հայոց Եկեղեցու կը բրոնւսուցութեան վրայ տալ կանոնադրութիւններ և ըստ Հարկին միջամտել Աղյնպէս և Հոգեւոր գպրոցների մանաւանդ զեմարանի տեսուչ և հոգաբարձուներ հաստատել կամ կարգել: *

28. Վերադիսել Հայ ժողովրդի բարոյական և կրօնական կեանքը, միջոցներ ձեռք առնել չշմարիտ կենցաղի զարգացման համար:

29. Վարձատրել պատիւներով և նիւթապէս Հայոց Եկեղեցու ջատագովներին:

30. Քարոզչական առաքելութիւն հաստատել հեթանոսաց մէջ:

31. Հաղորդակցել զանազան պետութեանց և եկեղեցեաց հետ Հայոց Եկեղեցու շահերը

* Տես. Կաղանկատուացի Խմ., որտեղ չնն կարողանում առանց Հայոց Կաթուղիկոսի եպիսկոպոս փոխադրել:

* Տես. Խ. Սպիրի. Խամբակ, Հայրապետութիւն Հայոց. Ս. Եկեղեցու. Պոլս. 1881. էջ. 161—167:

պաշտպանելու և կամ ժողովրդի կրօնական կեանքը բարելաւելու մասին:

32. Ապօլինի պատկերը (Ո. Ախովի և Վ. Պօլսի կրօնական ժողովի որոշումից յետոյ) լուծուած համարելու վճիռ տալ և կամ կարելի հանգամանաց մէջ ապաշխարանքով ներումին շնորհել: Պոռնկութեան, հիւանդութեան, անդարձ անջաւման, (կրօնաւորութեան) և անհաւատութեան պատճառով մեզաւոր ամուսնուն հոգով մեռած ծանաչել և միւս կողմին ամուսնանալու իրաւունք տալ: Կոյնակէն և

33. Պաակի թոյլառութիւն չհասութեան բացառիկ գեպքերում միայնթէ հիմնուած Հայոց Եկեղեցու սկզբունքների վրայ: Կոյնակէն և կոյսի և այրու, նաև երրորդ անգամ ամուսնանալու արգելուած պատկերն, եթէ կան ներելի հանգամանքներ և ներող հիմնունքներ, թոյլազրել:

34. Առհասարակ վճիռներ տալ այն բոլոր ինպիրների նկատմամբ որոնք որ և իցէ կերպով կազ ունին Հայոց Եկեղեցու գաւանական, բարյական, պաշտաման և մանաւանդ եօթը խորհրդների և կանոնների վիրաւորման հետ:

35. Ի լրումն ամենայնի խստութեամբ հըսկել որ բնաւ երբեք չօշափուի Հայաստանեաց Ա. Եկեղեցու միութիւնն, սրբութիւնն, ընդհանրականութիւնն և առաքելականութիւնն, ըստ որում և թոյլ ըտալ, որ Եկեղեցու գաղափարին և սկզբունքներին հակառակ անձննք որ և իցէ գեր կատարեն նորս մէջ և կամ օտար, սիստ և թիւր գարգապեառութիւնն կամ նորսալուր հակառակ մեկնութիւններով Ա. Գրքի հասողութիւնը թիւրեն ժողովրդի մէջ: ** Սոյնպիսի գեպքերում ծայրագոյն իշխանութեամբ ներգործել անպայման վճռականութեամբ, *** վասն զի, ինչպէս տեսանք, հա-

ւագըն է Եկեղեցի կազմող ու հասատութեամբ պահողն, ուրեմն նոյն իսկ վերջին որեւսարոն և աղքատնութիւնը հաւատք ունեն և ոչ անհաւատ հարուստը կամ զիտաւնը: Հաւատքից պէտք է բղիսն զիտութիւնն և հարստութիւն, որ Եկեղեցուն օգտակար լինին:

Թիւե մեր նախընթաց ասածներից արդէն պարզապէս երեսումէ թէ ինչպէս կարող են այդ իրաւասութիւնք ելնել կաթուղիկոսի ստացած իշխանութիւնից, այսու հանգերձ աւելորդ շի մինիլ ընդհանրապէս հիմնարանել այդոնք:

Խրեւ Հայաստանեաց Ա. Եկեղեցու պետ՝ կաթուղիկոսը չունի հաւասարազօր գործակից, ուրեմն և պէտք է ունենայ իւր բարձրութեան հաւասար ինքնավստահութիւն իւր արժանաւոր գիրքը պահելու համար: Այդտեղից արդէն բղխում է Սորա հիմնական պարտիքն, այն է՝ պահել Հայաստանեաց Ա. Եկեղեցին այն անարատութեամբ, որով իւրեան և աւանդուել, այս է կաթուղիկոսութեան բացարձակ հիմնաքարն: առանց որի ոչ ոք կարող կաթուղիկոս մնալ: Ասահճանի բարձրութիւնից և սրբութիւնից է բղխում և այս որ իրաւունք չունի բոլոր իրաւունքները մի ուրիշին տալ:

Եպիսկոպոս ձեռնապելու համար պէտք է ունենալ առաքելական իշխանութիւն և կամ Ա. Հոգու լիակատար շնորհք, ապա թէ ոչ եպիսկոպոսական մասնաւոր շնորհը թերակատար կլինի: Գլուենք որ առաքեալք են եղել եպիսկոպոսներ ձեռնապրոլք, իսկ յետոյ միայն առաքելական աթուների գահակալք ենին ձեռնապրութեան իրաւատէր, այդպէս եր բոլոր քրիստոնէական եկեղեցիներում Ռւսակի Նիկողոս մեծ ժողովի Զ. կանոնում կարգում ենք. «Ով թէ ոք ոչ կամօք կաթուղիկոսին լիցի եպիսկոպոս զայնպիտին մեծ ժողովն որոշեաց, զի մի՛ ևս իցէ եղիսկոպոս»: Կոյն իսկ Ա. Գրիգոր Լուսաւորիչը հետեւյ այդ

մերժումէ նենդեցուց անհաւատներին և չընշանաւատներին. նոյնը խառնութեամբ հրամայում է Հայաստ. Ա. Եկեղեցու կանոն ու վարդապետութիւնը:

* Տես. իմ գրուածքը, Պաակի Ս. Խորհուրդը. Ա. Էջմիածնի 1894. (Արարատ . Նոյն թուի :

** Տես. իմ գրուածքը Հայաստ. Եկեղ. և Բիւզանդ. ժողովոց պարագայք. Մոսկվա. 1892: Էջ. 90-226. և իմ պատմական հատազոտութիւնները, Արարատ . 1892, Խ 10-1893, Խ. 7: Տես ևս ստորեւ:

*** Արդէն մարտ տեսանք, որ Ամեսարանը բացէ ի բաց

սկզբունքին և իւր ձեռնապրութիւնն առաւ
• Թագէսս Առաքեալի աթոռից ։ այդպէս ա-
րին և նորա յաջորդներից ումանք, որոնք աշ-
խարհական էին, ըստ որում և կասարիայի
այդ աթոռը կոչումէին ։ Աթոռ Մեծին Գրի-
գորի ։ * Խնչպէս կանանք և յիսոյ, եպիս-
կոպոս ձեռնապրելու իրաւունք չէ ստանում
ոչ մի այլ անձն և ոչ մի աստիճանի շնորհա-
զործութեան միջոցին։

Մյուր պէտք է ասել և վարդապետ ձեռնապրելու
մասին որ ձեռնապրոցը պէտք է լինի ծայրապոյն
վարդապետ եպիսկոպոս, որպէս զի վարդապետա-
կան վիակաաար շնորհը ունենայ և առա թէ ու-
րիշին տալ կարենայ։ Սակայն որովհետեւ վարդա-
պետական շնորհը շատ մեծ է և ընդհանրական
է, ինչպէս պէտք է տեսնենք, ուստի իրաւունք
ունի կաթուղիկոսն և պարաւոր է ինքեան
վերադաշելու այդ, եթէ երաշխաւոր չէ այ-
լոց արածի հասար։

Խնչպէս որ գորա կաթուղիկոսից են առ-
նում ձեռնապրութիւնն, այնպէս էլ միայն
նորանից կարեն պատիժ ստանալ իրրե եկե-
ղեցականք նորա խոնարհուումն միմիայն ա-
ռաւելագոյն և կատարեալ շնորհ ունեցող իշ-
խանաւորին, վասն զի եկեղեցական իրաւասու-
թեան սկզբունքը շնորհն է, և ոչ ոյժը։ Ըստ
այսմ տեսնում ենք, որ Հայոց պատմութեան
մէջ մինչև անգամ Ազուանից ալքեպիսկոպոս-
ները միմիայն ընդհանրական կաթուղիկոսին
էին ենթարկուում և եթէ մեզանցում էին,
իշխանները չէին համարձակուում պատժ ել նո-
ցա, ** այլ զիմումէին կաթուղիկոսին, որ և
գալով անումէիր ինչ որ հարկն է։ Այդպէս
էր լինում նոյն իսկ Միւնեաց և այլ եպիսկո-
պոսաց հետ։ Ահա այդ աստուածային սկզբ-
րունքի հասաւաութիւնն է պատժու, որ
մինչեւ անգամ հեռաւոր երկների եպիսկո-
պոսք խոնարհումէին միմիայն ընդհանրական

* Փաստ. Թիւզ. Պետ. Գ. 26. 60. 62:

** Կազմակատաւացի. Պարիզ. II. Դ. Այժմ. զոր կար-
ծէար զումիւ բարի մեզ զներսէա, սա զայլ եղեալ օժ-
տել սկսաւ զբանաւոր հօտս Քրիստոս. Վանորոյ կամնաց
յուշ առնել սրբութեան մեջ՝ յայց ելանել որպէս ծերոց
անդամոց, և բժշկել զբէկում մեր :

կաթուղիկոսին։ Զորօր. Անանիա Անանչնե-
ցին յիշումէ իւր ժամանակի ամենահեռաւոր
անկիւնների Հայոց եպիսկոպոսների մասին։
«Սակ որ լինդ նոցա (Յունաց) իշխանու-
թեամբն են, ոչ ահա բազում այն են որ
ոչ զնոցայն, այլ զմերս ունին հաւատ, և աեւ
որչափ եպիսկոպոսունք կան ի մէջերկրապար, յԱսիայ, և ի Գամբիա, և ի Բիւթանիայ, և ի
Գաղատիայ և յառանձնակ Ասիայ, ի Սաւուիա,
և ի Վիւսարիա, ի Կիլիկիա, և յամենայն Ա-
սութիկը ընդ մերս իշխանութեամբ ի Գամբիրս,
և ի Գանզգրաւ, և մերձ ի Պոնտոս և յայնկոյս,
ի Յարսիս, ի Մակեդոնիւսիա և որք միանգամ
ընդ ձերով իշխանութեամբ են՝ ոչ ահա բա-
զում եպիսկոպոսունք ի Հայոց ձեռնապրեալ
հաստատուն կան ի ճշմարտութեան հաւա-
տը . . . և զայդ ամենայն գաւառաց եպիսկո-
պոսունք ունիմք ի հնագանգութիւն Աթոռոյ
պրոյն Գրիգորի։ *

Այս որ և իցէ ոյժի քաջազործութիւն չէ,
այլ շնորհաց ներգործութիւնն, այնպէս որ
մինչև անգամ Զ. Պարում Մովսէս կաթու-
ղիկոսի դէմ լարած հակաթոռութիւնը ըմ-
բռսաւացրեց զորօր. Միւնեաց եպիսկոպոսներին
և զիմել տուաւ գէպի Ազուանք։ † Ոյժով չէ
բաշխուում եկեղեցական իշխանութեան շնոր-
հն, ոյժով չի կարելի և կառավարել և հնա-
զանգեցնել։ Եպիսկոպոսի համար անպատճու-

1. • Որ լինէր ամբ 69 հնագանուն եւ անծնիշնան թե-
րա կ ատ ա թ թ օծման . ասումէ պատմելը նաև Ազուանքը
մասին։ Օրեւէ էջ. 200. Մինչեւ անգամ Կաթուղիկոսի յու-
ղարկաւորութեան աղօթքի մէջ միշումէ. . Ծորինցնը մնզ
զնոգին քո Սուրբ՝ որով Ծնկալաք զնորհս որդեզութեան
քո որով եղեր յեկենեցուն առաքնալս եւ մարգարէս եւ
աւետարանիչն՝ նոփիս եւ վարդապետա, ի հաստութիւն Հա-
ւատոյ, ի գործ պաշտաման վախուար սեղանոյ քո՝ որ զմ-
րումն մեր առնու, Յոր պատիւ եւ զծառայ քո . . .
արձանաւորեցն, ամք առ ն ա ւ ո վ ք ո յ ի ն շ ն ո ր-
հ օ ք ի ս ա թ ք ր ա գ ո յ ն ե ւ ի ծ ա յ թ ա գ ո յ ն ն ա ս-
տ ի ծ ա ն ս ո ա թ ք ե լ ա կ ա ն ե ւ ք ա չ ա ն ա յ ա-
պ ե տ ա կ ա ն, եւ ընտրեալ զայ ի բ ա զ մ ա յ ։ յ ա տ կ ա-
ց ո ւ ց ն թ յ ա տ կ ա կ ա ն ա ւ ա ւ շ ն ո ր հ ի ։ Եւ կար-
գեցնը զա զուին և այցելու եկեղեցւոց քում սրբոյ յանձնե-
լով ի սա զամնայն խորհուրդն . . . Որուէս զի յիշաննէ աստ-
ուածանոյ իւղոյ Հոգոյ սրբոյ սրբոյ, եւ ի ծագել պէսալս շնոր-
հացդ լուսափայլութեանց ի զուիս, եւ անտի ս տ ո ր ի-
ն ը ս տ ա ր ա ա ծ ե ս ց ի ։ Մաշտոց, էջ, օր:

թիւն էլ է հնազանդուել իւր նման շնորհ ու-
նեցողին, վասնորոյ և Օրբելեան եպիսկոպոսն
առումէ. (էջ. 202) «զի՞նչ փառք էր և պար-
ծանք նմա (եպիսկոպոսին Արևեաց) թողուլ
զմեծ Աթոռն Ա. Գրիգորի Լուսաւորչին և
ծառայել իւրում ծառայակցին, ողբ և ան-
կատար և թերի ունեին զօծումն շնորհին»:

“Սոյն հայեացքը կմայ և պատժի նկատ-
մամբ, զի եկեղեցականը չի կարող այնքան
ստորանալ, որ իւր ծառայակցի պատիժն ըն-
դունի: Այդ արդէն վերև տեսանք, սակայն
բերենք և մի օգտակար օրինակ: Անանիա կա-
թուղիկոսը, տեսնելով Արևեաց եպիսկոպոսի
անուղղայ ըմբռատութիւնն, ոչ միայն պատ-
ժեց, այլ «նախ երյծ ի պատւոյն զօվմեան
իւր ձեռնադրեալն վասն բամբասանացն զոր
յօդեալ էին, և ապա զիազիին»: Աակայն
նշանաւոր է և մի դէպք, իշխանները դիմեցին
և խնդրեցին ձեռնադրել վերստին Գագիկին: Զնայելով բոլոր այդ աղերսանաց՝ «ոչ պատ-
շաճ համարէր ուղղագատ և ծշմարտաքննին
Հայրապետն, զի կրկին ծնեալն վիժեալ լինի
և կրկին պսակեալն՝ անվաւեր կոչեսցի»: * Ընդ
սմին կարգալոյծ անելու համար կաթուղիկո-
սը կարող է միայն մի հիմունք դնել այն է՝
որ պատժուած անձը հոգեպէս մեռած է և
անընդունակ է Ա. Հոգու շնորհաց:

Ընդհանրական ժողով գումարելը ընդհան-
րական կաթուղիկոսի իրաւասութիւնն է, վա-
սըն զի ընդհանրական ժողով ասածդդ Եկեղեցու
լումն է և ուրեմն չի կարող առանց իւր պետի
կամ առանց առաքելական յաջորդի լինել:

Ըստ այսմ հիմնաբանուումն և 7. 9. 12.
14. 15. 16. 17. 19. յօդուածներն, որոնք
կախուած են կաթուղիկոսի առաքելական
շնորհաց ներդրծութիւններից:

Վանքերում կարգեր մոտցելը, նոր վիճակ-
ներ հաստատելը, եկեղեցական կարգասահու-
թեան վերաբերեալ կանոնադրութիւն կազմե-
լը, կոնդակներ տալը, Հայրապետական բաշ-
խումներ և առանձնաշնորհումներ անելը, Հա-

մայնքներ բանագրել կամ ներելը, ժողովրդի
բարոյական և կրօնական կեանքը վերադիտե-
լը, Հայոց Եկեղեցու ջատագովներին քաջալե-
րելը, քարոզչական առաքելութիւն հաստա-
տելը պետութեանց և եկեղեցեաց հետ բա-
նակցելը—այս ամենն ևս ընդհանրական և
տեղական պէտք է լինին, այլ և պէտք է
թէ Հայրապետական շնորհով կատարուին և
թէ ամբողջ ազգի և Եկեղեցու երաշխաւու-
րած անձի ձեռքով, ուրեմն այսոնք կաթու-
ղիկոսի իրաւասութիւնք են: Եթէ այդոք
կատարուին մի այլ անձից կամ մի քանի ան-
ձերից չեն կարող ընդհանրական տեղա-
կան, երաշխաւուրած և շնորհաձիր լինել
ըստ որում և ժամանակաւոր կիմին, այլ և
ոչ ոքի համար սուրբ նշանակութիւն չեն ու-
նենալ:

Մի միարանութիւնից միւսը փախչելն ար-
գելուումէ կրօնաւորներին, ըստ որում մին-
չե անգամ նզովուումեն առանց առաջնոր-
դի կամքին վանքից ենողները: Աակայն ընդ-
հանրական Հայրապետ կարող է երբեմն սոխ-
պողական հանգամանքներ տեսնել և իրեւ
իրաւատէր ժողովոց կանոնների, որ և իցէ ելք
տալ յօդուտ Եկեղեցու:

20. յօդուածը բարձր խոստովանահայրա-
կան իրաւասութիւնն է, որ պէտք է մատչելի
լինի Հայոց Հօր իւրաքանչիւր որդուն: Այդ
տեղ կարող են լինել թէ անձնական և թէ
ընտանեկան և հասարակական վշտերի վերայ
խոստովանանքներ, որոնք պէտք է անպատճառ
օծեալ Հայրապետի կողմից լսուին Հայրաբար:

Օրինական բայցառութիւնք անելը մի ձեա-
կան զանցառութիւնն է ժողովական կանոն-
ների: Աակայն իւրաքանչիւր ժողով կանոններ
է դնում: Հիմնուելով Հայաստանեացս Ա. Ե-
կեղեցու վարդապետական սկզբանց վերայ ըստ
որում եթէ վերանան այդ սկզբանց հանգա-
մանքներն, որպէս յիշեցինք, կվերանան և
կանոնները: Զորօր, եթէ մի կանոն դրուում
է սէրը ժողովրդի մէջ ծառայելու համար և
յանկարծ զալիս է մի ժամանակ, երբ սիրոց
կատարելութիւնն է տիրապետում այս գէպ-

քում ի հարկէ կվերանայ և կանոնը: Արդ՝ եթէ մի նոր պարագայի մէջ բոլորովին շինին ժողովի աչքի առաջ ունեցած սկզբունքի հանգամանքներն, ոյն ժամանակ հարկ պէտք է լինի վերասին ժողով զումարելու, եթէ չլինէր ժողովի մի օրինակատար իրաւատէր: Իսկ ամեն հանգամանքի համար կանոն դնել ոչ մի կերպ չի կարելի, վասն զի պարագայք անթիւն: Այս այսպիսի դէպէքերում իրաւատէր է ժողովի իրաւատու նախագահն և նա կարող է իւր երաշխաւորութեամբ բացառութիւնք անել Ա. Հոգու հովանու ներքոյ: *

Վարդապետական վճիռներ տալը հարկաւ հայոց Եկեղեցու բարձրագոյն վարդապետի իրաւունքն է, ըստ որում միայն նորա վճիռը կինի ըստ շնորհաց, ընդհանրական և պարտաւորիւ: Այս մասին ոչ մի տարակցոս չկայ: Սոյնը պէտք է ասել կրօնական զրքերի թոյլառութեան նկատմամբ, որոնք չեն կարող թոյլառարուիլ կամ արգելուիլ այնպիսի հեղինակութիւնից, որ ընդհանրական իրաւատութիւն չունի Հայաստանեայց Ա. Եկեղեցում ուրեմն և հեղինակութիւն չէ ամենայն Հայոց համար:

Թիգրոցների և կամ առհասարակ կրօնական դաստիարակութեան վերահսկել և ուղղութիւն տալը գարձեալ ընդհանրական գործ է, վասն զի ամբողջ Եկեղեցու դաստիարակչութիւնը անպատճառ մի ուղղութիւն պէտք է ունենայ և մի հայեցողութեան տակ լինի: Այս առաւել բարձր վարդապետական գործ է և կարօտ է առաքելական շնորհաց, որպէս զի մշտական և աստուածային լինի, քան թէ կրօնական ծանրակշիռ հարցերը:

Ազօրինի պատճերը չկայացած համարեն ևս մի քնքոյց հարց է, վասն զի ըստ ժո-

*. Ս. Հոգու շնորհը մէկ է, որ եւ Կաթուղիկոսի մէջորդութեամբ Ծիւլաւորուսէ Եկեղեցականաց մէջ, այնպէս որ նորա օգնութիւնը միւնչուն է ժողովականաց համար առանձին տրություն, միան ժողովում օգտակար է եւ մարդկան մորերի շփումը: Ս. Հոգու շնորհը մի է ի սկզբան ըստ չութեան ի միոյ պատճառէ յառաջ եկեւալ եւ ի բազում բազմացնալ ըստ որակութեան, որպէս եօթնարինան եւ ըստ աստիճանաց: Եւ զարծեալ զրազումք միաւորէ ինքնամք առ պատճան իր, որպէս սցա արեւու ի բազում տեսութիւնս: Ս. գ. Տաթևացի Հարց. Էջ. 140:

զովոց դոքա լուծուած են համարուում սակայն կարեն լինել թեթևացուցիչ հանգամանքներ, ըստ որում և Կաթուղիկոսը պէտք է կշռապատէ և եթէ հնարաւորութիւն կայ լաւագոյնն և թեթևագոյնը տնօրիններ: Եւ որովհետեւ պատճեան ըստ Աւետարանին և ըստ Հայաստանեայց Ա. Եկեղեցու խորհրդակատարութեան անլուծաների է, ուստի և վերոյիշեալ պատճաններով մի ամուսնուն մեռապ հանաչելը շատ ծանրակշիռ խնդիր է և հետեւաբար առաքելական շնորհաց իրաւասութիւն է, ըստ Պօղոսի թէ «բայց այլոց ես պատճերեմ ոչ եթէ Տէր»: * Սոյնը պէտք է ասել և չհասութեան, երրորդ անգամ ու կոյսի և այրու ամուսնութեան նկատմամբ: Պողիսի դէպէքերում Կաթուղիկոսը պարաւոր է ի նկատի առնել արգելիչ սկզբունքներն և եթէ այդոնք այս ու այն պարագայի մէջ պակասումեն, ըստ այնմ կարգադրել: Վերջին երկու արգելքներն այժմ գործնականապէս վերացրել են, սակայն զորանից բազմաթիւ չարիքներ են յառաջանում՝ ուստի և Ասորին Վեհափառութիւնը վերասին հոչակեց Հայաստանեայց Ա. Եկեղեցու այդ բարձր սկզբունքը:

34. և 35. յօդուածները պարտաւոր է Կաթուղիկոսն ինքն իրագործել վասն զի ինքն է Եկեղեցու պետն ու փեսան և Հայաստանեայց Եկեղեցին իւր ամբողջութեան մէջ վերադիտողը: Ընդհանրական վերադիտութիւնն այս մեծ նշանակութիւն ունի, զի երբեմն մի հեռաւոր գործ շօշափում է Եկեղեցու ամենահիմնական սկզբունքը: Իսկ այդ վերահսկելը բարձր վարդապետական և առաքելական շնորհաց յատուկ կարողութիւն է: Ընդ սմին Եկեղեցու միութիւնից են ծագում միւս բոլոր էական յատութիւնը և նշանները,

*. Ա. Կորնթ. Վ, 12:

1.. Ս. Էջմիածնի գերագահ: Աթոռոյ Հայրապետաց Խշանառութիւնն ու իրաւաստիթիւնը՝ ըստ առմաննելոյ Եկեղեցական կանոնաց, Ընդհանրական է, եւ կըտարածովի համայն Հայոց եւ Հայկական Ս. Եկեղեցոյ անխափը ամեն կարգի եւ ատիմամի պաշտօնէցից վրայ, որք պարտ մն հպատակ մաս եւ նազար ամենայն կանոնական համանաց նոցա: : Ս. Ն. Խամբընան: անդ. Էջ, 1283:

մինչդեռ եթէ զբուխը շինի մարմինի միութիւնը կորցնէ հսկողութան դիտարանը:

Ուրեմն կարծ՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցին մի մարմին է և նորա երկրաւոր զբուխն է ընդհանրական կաթուղիկոսը, պարզ է որ ոչ մի անգամ չի կարող իրրե ամբողջութեան մաս կառավարութիւն և զօրանար եթէ նորա զեկավարն ու հրամանատարը շնորհաւանդն ու վերահսկողը զբուխը չէ:

Արդ՝ այսքան զբուղութիւնք այդ յօդուածների մասին բաւական համարելով, նկատենք ևս, որ հետեւալ յօդուածներում մի առմի որոշուելու են այն բացայայտիրաւասութիւնք, որոնք ձեռնադրութեամբ տրուում են եպիսկոպոսին, վարդապետին և քահանային՝ որոշ որոշ յիշատակուելով: * Այդ ամենն ուշադրութեան առնելուց զինի, կհամոզանիք որ յիշեալ եկեղեցականք այլ ևս չեն կարող ունենալ ուրիշ որ և իցէ իրաւասութիւն: Ըստ որում և նոցա իրաւանց ընդհանուր իրաւատերն է կաթուղիկոսն, որ զբուխ է Հայաստանեայց Ս. Եկեղեցու և որի առաջ խոնարհումէ ամենայն շնորհառու և հաւատացող: Վասնորոյ և կաթուղիկոսը Ս. Հոգու կատարեալ շնորհը վայելելով, օրհնումէ Ս. միւռունին ** որ նշան է շնորհաց իւղի և Ս. Հոգու իշման, որով Օծեալ Հայրապետը շնորհազործում է իւր բոլոր հաւատացող որդիներին: Խնչող որ կաթուղիկոսը դիուխն է Եկեղեցու և օրհնող միւռոնի, այնպէս էլ միւռոնն շնորհազործութեան և սրբագրութան միջոցն և հիմունիքն է:

(Հարուսակելի)

Ա. ՏԻՒ. ՄԻ. ԿԵ. Ե. Ա. Ա.

* * Զերաք եւ զատիֆան, զրո ունի զաթին, լրմամբ ունի եւ սարկաւագն: բայց սարկաւագն զրո ինչ կարգ եւ սատիֆան ունի, զպին ոչ ունի զամենայն: նոյնպէս և սարկաւագն զրո ինչ կարգ ունի, լրմամբ ունի և քահանայն, բայց քահանայն զրո ինչ ունի, ոչ ունի սարկաւագն: Եւ այսպէս չունեցեալ կարգ քահանայն՝ զամենայն ունի լրովին եպիսկոպոսն: բայց չունեցեալն եպիսկոպոսն՝ լրմամբ ոչ ունի քահանայն: նոյնպէս և եպիսկոպոսն ունեցեալ զերաք և զատիֆանան լրմամբ ունի և կաթուղիկոսն, բայց զերաք եւ զատիֆան Կաթուղիկոսն ոչ կարէ ունի լրապէս եպիսկոպոսն: Սիէմոն Կաթուղիկոս: Պարտավճար: Բայց Դիունէսիսիք: ՀՀ 315:

*** ՏԱՐ, Կանոնք. Ս. Մահակայ, Ի. Յով, Դաստ. Թ. Միոն Կաթուղիկոսի, Ե.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՐՆ



նդհանուր քրիստոնեական եկեղեցիների կեանքից «Արարատ քննթերցաներին պարեւարութեան տեղեկութիւնների տարու նորատակով»

այս համարից իսկ սկսում ենք մի համառօտ քրոնիկոն կամմել բոլոր քրիստոնեայ եկեղեցիների կեանքի զիստուր երեսոյթեան մասին:

Գիտութեան աղբիւրը ճանաչողութիւնն է, թող հայ ընթերցաները ճանութութիւն ունենան ամրող քրիստոնեական աշխարհի մասսին, որպէս զի զնահատել սովորեն մեր ուրիշ և հնագոյն եկեղեցու արժանիքը:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ի. ԵԿԵՂԵՑԻ ՄԻԱՅԻ ՄԻԱՅԻ ԽՆԴԻ ԲԲ:

Անցնող տարուան ընթացքում պապական կամ կաթոլիկ եկեղեցու մէջ կատարուած մեծագոյն դործն եղաւ Աւեռ Ժ. Պ. պապի հրաւիրագիրը բոլոր արեւելեան եկեղեցիներին՝ և Վատիկանի ժողովը արեւելեան եկեղեցու հռովմէականի հետ միացնելու նըւպատակով:

Եւրոպայում այսօր երկու եկեղեցական մեծ ուղղութիւններ կան, մէկը կաթոլիկական և միւրարագական: Եյս երկու եկեղեցիքն ևս հասել են իրենց նըրբին զարգացման ծայրացեղ արտայայտութեան կէտին:

Կաթոլիկութիւնը կենդրոնամէտ ուղղութեամբ ձգտումէ միացնել բոլոր եկեղեցիները մինչ գետը բողըականութիւնը կենդրոնախոյզ ուղղութեամբ հետ զիետէ հատուածների և նորանոր հերձուածների և բաժանուում:

Կաթոլիկ եկեղեցին կենդրոնականութեան գիմելով հասել է այնտեղը, որ աստուածացիր է իւր կենդրոնական իշխանութիւնը, պապի անձնաւորութիւնը: Նարբին զարգացման ընթացքում այս մեծագոյն անհեթիւններան հասելով այժմեան պապականութիւնը, դիմումէ մի նպատակակէտի: